

ԽԱՉՎԱԾ ՕՐԵՐԻ ՄԱԳԹԱՂԵՆԱՑԻ

Posted on May 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)




Սամվել Խալաթյան, Երևան, 1 մայիս 2023

Չէր կարող պատահել, որ հռչակվող հայրենիքի ցավն ու պատմական նոր ողբերգությունն իրենց գեղարվեստական արտացոլումը չունենային մեր ժամանակակիցների արվեստում: Արդեն իսկ արարվել են մնայուն, արժեքավոր ստեղծագործություններ, որոնք ոչ միայն մեզ բաժին հասած դրուժան իրականության մեջ հայրենիքի նկատմամբ անդավաճան սիրո անհրաժեշտությունն ու վեհությունն են շեշտում, այլև ակնակիր իրականության մեջ փարոսի պես ցուցանում են մեր ուղղությունը դեպի փրկության այն ափն ու երկիրը, որի ընդերքում են հարատևության ազգային արմատները:

Այս առումով, նկարչության մեջ ակնառու են Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի վերջին շրջանին ստեղծած կտավները և, հատկապես, մեծադիր «Մղձավանջ» գեղանկարը, Եվա Գևորգյանի «Մատյան լինելության» նկարաշարը: Գրվեցին նոր թատերգություններ, օրինակ՝ Կարինե

Խոհափիլիսոփայական տաղերը, Ռուզան Հովասափյանի «Խաչված օրեր» բանաստեղծությունների ժողովածուն և այլն...



Ահա, վերջինի մասին է, որ ուզում եմ խոսել, քանզի, ազգային բանաստեղծության շտեմարանի կին ստեղծագործողների բազմանուն շարքում Ռուզանը տաղերգուի նկարագրով նոր շունչ ու երանգ է բերում հաստատելով իր տեղը հայոց քնարերգության մեջ, վերահաստատելով հայոց ավանդական տաղերգության գանձարանի համամարդկային արժեքն ու մշտատև կենսունակությունը:

Բանաստեղծուհու երրորդ գիրքն է «Խաչված օրերը», որը նախորդների տրամաբանական շարունակությունը լինելով իր ոճաբանությամբ ու թեմայով, նոր և բարձր աստիճան է ոչ միայն տաղերգական հղկված ու անթերի շարադրանքով, այլև, ու հատկապես, հանրության այսօրվա տագնապները, մտահոգությունները, ապրած ցավն ու տվայտանքները բանաստեղծական ինքնատիպությամբ, զուտ կանացի զգացմունքայնությամբ արտահայտելու և զորեղ ու երջանիկ հայրենիք ունենալու տեսլականը պահպանելու հաստատակամությամբ:

Ժողովածուն ներկայանում է երեք շարքով՝ «Սիրուդ ջուր եմ խառնել», «Խաչված տողեր»
և «Դու կարմիրդ հանիր, ես՝ սևերս»:

Սիրուդ
Ջուր եմ խառնել՝
Որ սիրտս դիմանա.
Մի բուռ ջուր է,
Բայց աչքերս չեն ցամաքում...

Ես ի՞նչ եմ անելու,
Երբ գա
Սիրուդ
Ծով խառնելու
Ժամանակը...

Այսպես է ներկայացնում իր սերը բանաստեղծուհին, ապա՝

Մինչև
Փյունիկի պես
Կհառնես մոխիրներից,
Ինձ կմոխրացնի այն ցավը,
Որ դու, Հայրենիք,
Մի սովորական թռչուն ես դարձել...
Ու փոխանակ
Ցավս փոքրանա,
Դու ես փոքրանում:

Կարիք կա՞, արոյոք, վերլուծելու, բացատրելու կամ փաստելու, թե որքա՞ն ողբերգական
է նրա զգացմունքն իր սիրեցյալ հայրենիքի նկատմամբ, երբ այսպիսի ինքնատիպ
տաղերգականությամբ է արտահայտվում:

Շարունակենք հետևել նրա մտքի ընթացքին... Չէ՛, հոգո՛ւ, սրտի՛ ընթացքին.

Ու երբ քառասուն օր
Երկաթե անձրև տեղաց,
Ու երբ ջրերի տեղ
Տղերքի արյունը քաշվեց,
Ես շյուղի հետևից
Ուզեցի աղավնի ուղարկել –
Երկինքը չկար...

Աստվածաշնչյան պատմության նմանօրինակ տարածնությունը նոր՝ անելանելի
իրավիճակում զգալու բանաստեղծուհու տվայտանքն իր պատճառն ունի.

Երկու հազար քսան թվականին
Աշունը
Իմ հայրենիք չեկավ –
Քսան տարեկան տղերքն էին
Ճառերը կարմիր ներկում...

Մի պահ ետ քաշվենք պատումի իրադարձային գեղարվեստականությունից և ուշադրություն դարձնենք հեղինակի տաղերգական գեղարվեստին, բերելով հատկանշական մի օրինակ.

Այդ աշնանը
Իմ հայրենիքում
Նռները
Չհասցրեցին ճաքել...

Նորից աշուն է
Ու էլի՛ կարմիր...

Այն չճաքած՝
Նռներն են ճաքել

Սա, ըստ իս, ստեղծագործողի լայն մտահորիզոնի և արվեստագետի խորաթափանց մտքի հայտնագործությունն է: Միտքս հաստատելու համար **Նուռ** բառի ստուգաբանությանը չեմ դիմի, քանզի երկար մեջբերումներ կպահանջեր: Հիշենք միայն, որ թե՛ հայերենում և թե՛ հնդեվրոպական լեզուներում **Նուռ** և **Նռնակ** բառերը նույնարմատ են (*հատիկավոր* – **granatus**, լատ.) և Ռուզան Հովասափյանն այս բառերն օգտագործելով ոչ միայն ներքին հանգ է ապահովել, այլև դրանց նույնական արմատի, բազմիմաստություններն է պատկերավոր հակադարձել՝ բանաստեղծական հիրավի գոհար ստեղծելով:

Եթե շարունակենք այսպես, ապա ստիպված կլինենք մեջբերումներ անել բոլոր բանաստեղծություններից, որոնք, իրենց հերթականությամբ հուշում են, որ հեղինակը սուսական չի զետեղել դրանք, այլ նպատակադրել է իր զգացմունքների հարածուն ընթացքով տաղ առ տաղ կերտել սիրեցյալի կերպարը՝ ամբողջության մեջ թատերգությանը հատուկ սյուժետային զարգացում, ապրումների գազաթնակետ ապահովելով:

Մարդեղենացնելով սիրեցյալի կերպարը, բանաստեղծուհին, որ վեհագույն սիրո երկկերպար պատումի հերոսուհին է, վերջապես, գրքի վերջին բաժնում, բարձրաձայնում է իր սիրո անունը՝ **Նաիրի**: Դրանից հետո քերթությունների տաղաչափությունն էլ է փոխվում՝ դառնում է հնադավան-նաիրյան, և ապրումներն ավելի կանացի են և ավելի անձնական ու հուզիչ.

*Ամեն ինչ ծաղր է, ամեն ինչ ծախու,
Երեկն, այսօրը և օրը վաղվա,
Մի տեղ անուկնիդ կրակն է ծխում,
Ո՞րք է անուկնդ, Նաիրի տղա:*

*Քեզ երագելն է ապրեցնում նորից,
Որքան էլ մեղքդ բաց վերքիս տեղա,
Որքան էլ երգս մենակ թողնի ինձ,
Իմն ես լինելու, Նաիրի տղա:*

«Խաչված օրերը» հայրենասիրության յուրատեսակ ձոն լինելով, խաչ բարձրացվող սիրեցյալ հայրենիք-Նաիրի տղային անդավաճան մնալու և նրա հարությանը հավատալու յուրօրինակ տաղերգական ասք է, հայուհի Մագթաղենացու խոստովանություն-աղոթք:

Ընթրիք

Միայն ես ու դու
Կնստենք
Ընթրիքի սեղանի շուրջ,
Գինին շատ կլինի,
Եվ չի լինի ոչ մի առաքյալ...
Եվ դու չես ասի,-
Ձեզանից մեկը
Ինձ մատնելու է...

Քեզ մատնողը,
Իմ երկիր տղա,
Գինին կլինի,
Եվ սերս կլինի
Խաչդ...

...

Ճակատդ ի վար երկինքն է քամվում,
Նորից անձրև է, Նաիրի՛ տղա,
Ճակատագիրը հեշտ չի մաքրվում,
Այս անձրևը դեռ երկար կտեղա:

Իմ ուժե՛ղ տղա, դու լա՞ց ես լինում,
Թե՞ անձրևներ են այտերդ ի վար,
Տղերքը այնքան բարձր են լռում,

Երանի լացդ ինձ անձրև թվար:

Ես եմ այս անգամ քեզ արարելու
Հող ու արյունից հար ընկածների,
Ճակատագիրդ ես եմ գրելու,
Թող ամենատես Բրուտն ինձ ների:

Ու գրելու եմ տղո՛ւ ասածով,
Որ խրամատը չդառնա սև փոս,
Որ ո՛չ մի մարդու և ո՛չ մի աստծո,
Ել երբեք չասես,- Եվ դո՞ւ, Բրուտոս...

There are no comments yet.